Ա Ռ Ա Ր Կ Ո Ի Թ Յ Ո Ի Ն Ն Ե Ր

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 16-Ի ԹԻՎ ԹԻՎ 88-Ա, 91-Ա ԵՎ 92-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 88-Ա որոշման նախաբանում հղումը պետք է կատարվեր Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 8-ի թիվ 22-Ն որոշման 2-րդ կետով սահմանված հավելվածի 3-րդ կետի ոչ թե 4-րդ, այլ՝ 5-րդ ենթակետի «բ» պարբերությանը:

Որոշման բովանդակության մեջ համայնքի անվանումը թերի է գրառված: Անհրաժեշտ է «Արթիկ» բառից առաջ գրառել «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի» բառերը:

Թիվ 91-Ա որոշումը չի համապատասխանում «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներին, համաձայն որի՝ համայնքի ավագանու անդամը իր պարտականությունների կատարման հետևանքով առաջացած ծախսերի դիմաց իր ցանկությամբ և ավագանու որոշմամբ կարող է ստանալ ամսական դրամական փոխհատուցում՝ ՀՀ Ազգային ժողովի պատգամավորի ամենամսյա պատգամավորական ծախսերի մինչև 30 տոկոսի չափով:

Թիվ 92-Ա որոշման մեջ նշված չէ ընդերքօգտագործման իրավունք ունեցող անձի անվանումը և ընդերքի իրավունք տրամադրելու մասին համապատասխան իրավական ակտի անվանումը: Բացի այդ, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթների համաձայն, որոշման մեջ անհրաժեշտ է նշել նաև հողամասի վարձակալության տրամադրման եղանակը, ժամկետը և վարձավճարի չափը:

Կատարող՝ Նաիրա Մարտիրոսյան
09.06.2022թ.